# ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ազատն Աստուած այն օրից ,
Երբ հաճեցաւ շունչ փչել
Իմ հողանիւթ շինուածքին ,
Կենդանութիւն պարգեւել .
Ես անբարբառ մի մանուկ `
Երկու ձեռքս պարզեցի ,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւնն գրկեցի :
Մինչ գիշերը անհանգիստ `
Օրօրոցում կապկապուած ,
Լալիս էի անդադար ,
Մօրս քունը խանգարած ,
Խնդրում էի նորանից
Բազուկներըս արձակել .
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել :
Թոթով լեզուիս մինչ կապերն
Արձակուեցան , բացուեցան ,
Մինչ ծնողքըս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան ,
Նախկին խօսքն , որ ասացի ,
Չէր հայր , կամ մայր , կամ այլ ինչ .
“ Ազատութի՛ւն ” դուրս թըռաւ
Իմ մանկական բերանից :
“ Ազատութի՞ւն ” ՝ ինձ կրկնեց
Ճակատագիրն վերեւից .
“ Ազատութեան դու զինուոր
Կամի՞ս գրուիլ այս օրից :
Ո՛հ , փշոտ է ճանապարհդ ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ .
Ազատութիւն սիրողին `
Այս աշխարհը խիստ նեղ է ” :
- Ազատութի՛ւն , - գոչեցի , -
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ , կայծակ , հուր , երկաթ ,
Թո՛ղ դաւ դնէ թշնամին .
Ես մինչ ի մահ , կախաղան `

Մինչեւ անարգ մահու սիւն ,
Պիտի գոռամ , պիտ կրկնեմ ,
Անդադար՝ Ազատութի՜ւն ։

**Միքայել Նալբանդյան**